ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/3-17/2 >>

ք. Երևան **<< 19 >> մայիսի 2017թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայությունն, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարող **Արմեն Հարությունյանի**, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **«Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **(Հավելված N 3.1)**, ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը **(Հավելված N 3)**:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3100000 (երեք միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն	**«Մ-Բի-Ռ» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41/ա	**ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011288025	**Հ/Հ 220083335012000**
ՀՎՀՀ 01223338	**ՀՎՀՀ 08417829**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 19 >> մայիսի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/3-17/2 >> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1	2	3	4	5	6	7
Հ/Հ	Գնման առարկայի անվանումը			Տեխնիկական բնութագիր	Միավոր ծառայության գինը /ՀՀ դրամ/	Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/
1	ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ BYD F3 մակնիշի 2010թ., 2011թ., 2013թ., 2014թ.՝ թվով 16 ավտոմեքենա: BYD F6 մակնիշի՝ 2011թ., 2013թ.՝ թվով 3 ավտոմեքենա: BYD S6 AT 2012թ՝ 1 ավտոմեքենա: Շեվրոլե-Նիվա 21230, 2008թ. 2009թ. 2010թ.՝ թվով 7 ավտոմեքենա:	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (BYD F3 մակնիշի, 2010թ. 2011թ. 2013թ. 2014թ,) Ընդամենը 16 ավտոմեքենա	Հետևի կախոցների (амортизатор) փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ. արտադրության BYD F3 մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի կախոցների (амортизатор)՝ զույգ, փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ **թվով 16 ավտոմեքենաների համար** ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	104000	3100000 (երեք միլիոն հարյուր հազար)
			Շարժիչի ռետինե փոկի փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ. արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /շարժիչի աշխ. ծավալը՝ 1.6լ/ ռետինե փոկի և փոկը ձգող ռոլիկի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը**	56000	

				պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 16 ավտոմեքենաների համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		
			Շարժիչի յուղի փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /1.6 լիտր աշխ. ծավալով/ յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell (10/40) ֆիրմայի արդադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	688000	
			Փոխանցման տուփի յուղի փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /1.6 լիտր աշխ. ծավալով/ յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների **համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	57000	
			Շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային**	48000	

				արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 16 ավտոմեքենաների համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի		
			Առջևի դիսկերի առանցքակալների փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի դիսկերի առանցքակալների (подшипник цапки՝ աջ և ձախ, զույգ, կոմպլեկտ) փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող առանցքակալների և տեղադրման արժեքը: Առանցքակալները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 16 ավտոմեքենաների համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	96000	
			Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 16 ավտոմեքենաների համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	168000	
			Հետևի ընթացքային մասի գնդաձև	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 մակնիշի ավտոմեքենայի հետևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /тяга/	96000	

			ձգաններ ի փոխարին ում	**փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**		
			Բենզինի ֆիլտրի փոխարին ում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի բենզինի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	72000	
			Առջևի անվադող երի բացվածք ի կարգաբե րում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	64000	
			Առջևի ընթացքա յին մասի գնդաձև ձգաններ	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /шаровой/**	144000	

			ի փոխարինում	**փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**		
			Առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների փոխարինում	2010թ.2011թ.2013թ.2014թ արտադրության BYD F3 **մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /тяга/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 16 ավտոմեքենաների համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	176000	
		Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (BYD F6 մակնիշի , 2011թ. 2013թ.) Ընդամենը 3 ավտոմեքենա	Շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում	**2011թ.2013թ. արտադրության BYD F6** մակնիշի ավտոմեքենայի շարժիչի օդի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ **թվով 3**	16500	

				ավտոմեքենայի համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		
			Օդորակիչի ֆրեոնի լիցքավորում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի օդորակիչի ֆրեոնի լիցքավորում՝ ըստ պահանջվող քանակի (ներառյալ լիցքավորվող ֆրեոնի արժեքը), զտում, օդորակիչի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	24000	
			Օդորակիչի ֆիլտրի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի օդորակիչի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող ֆիլտրը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	12000	
			Շարժիչի DMRV-ի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի/շարժիչի աշխ. ծավալը՝ 2.4լ/ օդի հոսքի ավտոմատ կարգավորիչի (DMRV) փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի համար **ըստ պատվիրատուի**	33000	

				ներկայացված պահանջի:		
			Շարժիչի յուղի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի /2.4 լիտր աշխ. ծավալով/ յուղի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell (10/40) ֆիրմայի արդադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	69000	
			Առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի առջևի անվադողերի բացվածքի կարգաբերում: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի **համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	13500	
			Սրահի ռետինե գորգերի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի սրահի ռետինե գորգերի/կոմպլեկտ/ փոխարինում /ներառյալ փոխարինվող գորգերի արժեքը/: Փոխարինվող գորգերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝** թվով 3 ավտոմեքենայի համար **ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:**	33000	
			Շարժիչի ինդուկցիոն կոճի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 **մակնիշի ավտոմեքենայի շարժիչի ինդուկցիոն կոճի /катушка/ փոխարինում փոխարինում (ներառյալ փոխարինվող**	33000	

				պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 3 ավտոմեքենայի համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		
			Բենզինի ֆիլտրի փոխարինում	2011թ.2013թ. արտադրության BYD F6 մակնիշի ավտոմեքենայի բենզինի ֆիլտրի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 3 ավտոմեքենայի համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	19500	
		Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (2012թ. արտադրության BYD S6 AT 2012թ.)	Անվադողերի փոխարինում	2012թ. արտադրության BYD S6 AT մակնիշի ավտոմեքենայի անվադողերի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվադողերի /4 հատ ամառային,/, հավասարակշռման և տեղադրման արժեքը: Անվադողերը պետք է լինեն նոր, Cordiant կամ Amtel ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվադողերի չափսը 205/65/15: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ թվով 1 ավտոմեքենայի համար ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	78000	